

**ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՆՈՐՈԳՎԵԼ (*anakainōsis*)**  
**SPECIAL TOPIC: RENEW (*anakainōsis*)**

Հունարեն այս տերմինը իր տարբեր ձևերով (*anakainoō, anakainizō*) ունի երկու հիմնական նշանակություն՝

1. «ինչ-որ բան նոր կամ տարբեր դարձնելու պատճառ հանդիսանալ» (այսինքն՝ ավելի լավ) – Հռոմ. 12:2; Կոր. 3:10
2. «դեպի նախկին ավելի նախընտրելի վիճակին վերադառնալու փոփոխության պատճառ հանդիսանալ» - 2 Կորնթ. 4:16; Եբր. 6:4-6 (վերցված է Լու և Նիդայի Հունարեն-անգլերեն Բառարանից, հատոր 1, էջ՝ 157, 594 /Louw and Nida *Greek-English Lexicon*/)

Մուլթոն և Միլիգան, Հունարեն Կոտակարանի Բառարան /Moulton and Milligan, *The Vocabulary of the Greek Testament*/ գրքում ասում է, որ այս տերմինը (այսինքն՝ *anakkainōsis*) հնարավոր չէ գտնել Պողոսից առաջ գոյություն ունեցած հունարեն գրականության մեջ: Հնարավոր է, որ Պողոսն ինքն է կազմել այս տերմինը (էջ՝ 34):

Ֆրենկ Սթեգը, Նոր Կոտակարանի Աստվածաբանություն (Frank Stagg *New Testament Theology*) գրքում տալիս է մի հետաքրքիր մեկնություն .

«Վերածնունդն ու նորոգումը միայն Աստծուն է պատկանում: *Anakkainōsis* բառը «նորոգություն» տերմինի համար, գործողության գոյական է և առկա է Նոր Կոտակարանում բայի տարբեր ձևերի հետ համատեղ՝ նկարագրելու շարունակական նորոգություն, ինչպես Հռոմ. 12:2-ում. «Ձեր մտքի նորոգությամբ նորոգվեք» և 2 Կորնթացիների 4:16-ում՝ «Մեր ներքին մարդը նորոգվում է օրեցօր»: Կողոսացիների 3:10-ը նկարագրում է «նոր մարդուն» որպես մեկի, որը «նորոգված է գիտությամբ՝ ըստ իր Արարչի պատկերի»: Այսպիսով «նոր մարդը», «կյանքի նորոգությունը», «վերածնունդը» կամ «նորոգությունը» ինչպես որ նախատեսված է եղել, հանդիսանում է Աստծո կողմից՝ որպես հավիտենական կյանք տվողի և ապահովողի, սկսած և շարունակելի գործը» (էջ՝ 118):